ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԹԵՍՏԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուղեցույցում ներկայացվում է ուսուցչի ատեստավորման թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, դրանց նմուշ-օրինակները, պատասխանների գնահատման չափանիշները, առաջադրանք-ներում ընդգրկվող նյութի շրջանակները:

Թեստավորումն անցկացվում է համակարգչային եղանակով, տևողությունը՝ 180 րոպե:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը պարունակում է 60 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 60 միավոր:

Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն հետևյալ 2 հիմնական տեսակները՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ և կարճ պատասխանով առաջադրանքներ:

- Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում են պատասխանի 4-ական տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ճիշտ պատասխանի դեպքում առաջադրանքին տրվում է 1 միավոր:

Կարճ պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում են 7 պնդումներ, շարքեր և այլն, որոնցից պահանջին համապատասխանում են մի քանիսը: Ըստ առաջադրանքի պահանջի պետք է ընտրել բոլոր ճիշտ կամ սխալ պատասխանները: Այդ առաջադրանքներում **ճիշտ պատասխանների քանակը հարցադրման մեջ չի նշվում:** Առաջադրանքին տրվում է 1 միավոր, եթե ճիշտ են նշված պահանջին համախատասխանող բոլոր միավորները:

Կարճ պատասխանով առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է նշել առաջադրանքի պահանջին բավարարող ճիշտ և լիարժեք պատասխանը: Սխալ, թերի կամ ոչ ամբողջական պատասխանի դեպքում միավոր չի տրվում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Տեսակ	Քանակ	Միավոր
Ընտրովի պատասխանով	45	45
Կարճ պատասխանով	15	15
Ընդամենը	60	60

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ընտրովի պատասխանով

Արվեստի ո՞ր տեսակի մեջ է նկարիչը կիրառում մատիտով նկարելու տեխնիկա: (1 միավոր)

1) Կոլաժ
2) Գեղանկարչություն
3) Գրաֆիկա
4) Գեղարվեստական լուսանկարչություն

Կարճ պատասխանով

Ո՞ր նկարներն են ներկայացնում Մարտիրոս Սարյանի արվեստին պատկանող աշխատանքներ: (1 միավոր)

1. Վիշտ
2. Ինքնադիմանկար: Երեք հասակ
3. Ծաղիկներ Հայրենական մեծ պատերազմի հայ մարտիկներին
4. Մալիշկա գյուղը
5. Մարիամ Կոնիի Շալամյանի դիմանկարը
6. Քայլող կինը
7. Շուշանիկ Նադիրյանի դիմանկարը

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

Ուսուցիչների ատեստավորման թեստերի կազմման համար որպես հիմք են ընդունվում «Կերպարվեստ» առարկայի հանրակրթական դպրոցի ծրագրերը, չափորոշիչները և գործող դասագրքերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթական դպրոցում գործող դասագրքեր
2. Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ., Հայ արվեստի պատմություն, Զանգակ 97, Եր., 2009թ., 574 էջ
3. Աղասյան Ա., Արվեստի պատմություն. կերպարվեստ: Ուսումնական ձեռնարկ, Ա. Աղասյան.-Եր.: Արմավ, 2020, Գիրք 1.-256 էջ
4. Աղասյան Ա., Արվեստի պատմություն. կերպարվեստ: Ուսումնական ձեռնարկ, Ա. Աղասյան, Եր.: Արմավ, 2022, Գիրք 2.-308 էջ
5. Եղիազարյան Ա., Զարդարվեստը հանրակրթական դպրոցում, Մանկավարժ հրատ., Եր., 2002, 108 էջ
6. Ներսիսյան Լ. Ս., Կերպարվեստ. Ուսուցման պատմություն, տեսություն, մեթոդիկա, Եր., 2025, 368 էջ

Ծանոթություն: Գրականության ցանկում չնշված որևէ այլ աղբյուր չի կարող հիմք ծառայել բովանդակային բողոքարկման համար: